

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

**5-15.20.01 «ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ԿՈՇԿԱԿԱՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱՔՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ			
1	Կոշիկի մոդելավորում և նախագծում				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ			
2	Բնական և արհեստական նյութերի ձևում և կտրում			1	Կոշիկի տեխնոլոգիայի և սարքավորումների,			
3	Համացանց			2	Օտար լեզուների,			
4				3	Բնագիտական առարկաների,			
				4	Հումանիտար և սոցիալ տնտեսագիտական առարկաների,			
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	Ճարտարագիտական գրաֆիկայի,			
1	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	1,2	4	6	Նյութագիտության			
2	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	2	4					
3	Նախաավարտական	2	2		ԼԱՔՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ			
			10	1	Կոշիկի արտադրության մեջ օգտագործվող կաշվի և այլ նյութերի,			
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ Համալիր քննություն ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից				2	Համակարգչային:			
				ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐ				
				1	Կոշիկի տեխնոլոգիայի,			
				2	Կոշիկի երեսամասի և տակամասի հավաքման:			
				ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ				
				1	Մարզադահլիճ			
2	Մարզահրապարակ							

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Սովորողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների զծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է յաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է ուսումնական հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
- Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է ուսումնական հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է ուսումնական հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
- Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
- Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
- Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
- Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
- Պահուստային ժամերը տնօրինում է ուսումնական հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
- Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
- Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
- Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-13-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական ուսուցում՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ol style="list-style-type: none"> ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց

	<p>բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված	Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Ռիսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Ռիսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,

	<p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց</p>

	<p>կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-3-13-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական ուսուցում՝ 46 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4. ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար

	մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չափանիշներու դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, 2. տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 3. հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 4. էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը: 5. կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան

Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց

	<p>կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 12 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ցուցաբերել առաջին օգնություն</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և</p>

	իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-3-13-001
Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական ուսուցում՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. փնտրի և գտնի աշխատանք, 2. հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ, 3. արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը, 4. ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, 2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղ(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, 3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV) ,

	<p>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,</p> <p>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերություններ ծագման հիմքերի, կողմերի իրավունիքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,</p> <p>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</p> <p>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</p> <p>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p>

	<p>Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
<p>Ռիսումնառության արդյունք 3</p>	<p>Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, 2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, 3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման, 4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, 5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է</p>

	<p>թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-3-13-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 12 ժամ Գործնական ուսուցում՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ol style="list-style-type: none"> 1. տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը, 2. խմբագրի և ֆորմատավորի տեքստերը, 3. պատրաստի և խմբագրի աղյուսակները, 4. կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 5. կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով, 6. աշխատի համացանցում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),

	<p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր համակարգի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p> <p>4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անհիմացիաներ և այլն:</p>
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի

	<p>նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարագրում
Կատարման չափանիշներ	1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,

	<p>2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>3) գծագրում է կանոնավոր պատկերներ,</p> <p>4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>6) գծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</p> <p>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անհիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</p> <p>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</p> <p>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անհիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի</p>

	<p>տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Համացանցում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է համացանցային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , համացանցային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում է տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (ԿՈՇԻԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)»

Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-001
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ կոշիկի զարգացման պատմության և դրա արտադրության կազմակերպման հիմնական գործընթացների վերաբերյալ:</p> <p>Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը պետք է իմանա կոշիկի ծագման, զարգացման պատմությունը, զարգացման փուլերը, դրա անհրաժեշտությունը, կոշիկների ընդհանրություններն ու հիմնական տարբերությունները, արտադրության կազմակերպման հիմնական գործընթացները:</p>
Մոդուլի տևողությունը	<p>18 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 10 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 8 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի կոշիկի ծագման պատմությունը, 2. ներկայացնի կոշիկի զարգացման փուլերը, 3. ներկայացնի կոշիկի նշանակությունը, 4. ներկայացնի կոշիկի արտադրության կազմակերպման հիմնական գործընթացը, 5. ներկայացնի կոշիկի հայրենական արտադրության զարգացման պատմությունը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կոշիկի ծագման պատմության ներկայացում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կոշիկի ծագման պատմությունը աշխարհում, մասնավորապես Հայաստանում, 2) ճիշտ է ներկայացնում կոշիկի նախատիպերը (մորթուց և տրեխատիպի), 3) ճիշտ է ներկայացնում կոշիկի պատրաստման համար օգտագործվող նյութերը և մասերը, 4) ճիշտ է ներկայացնում կոշիկի անհրաժեշտությունը մարդու ոտնաթաթի պահպանման համար:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա:</p> <p>Ուսանողին տրվելու են հարցեր՝ կոշիկի ծագման պատմությունը աշխարհում և մասնավորապես Հայաստանում: Հարցերը պարունակելու են կոշիկի կառուցվածքի վերաբերյալ՝ դանդալ, տրեխ, օպանկա, չստեր, տուֆլիներ, երկարաճիտ կոշիկներ և</p>

	<p>կիսաերկարաճիտ:</p> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին տալիս է գրագետ և տրամաբանորեն ճիշտ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքերով: Անհրաժեշտ է ունենալ կոշիկի ծագման վերաբերյալ ալբոմներ, պլակատներ: Անհրաժեշտ է օգտագործել կոշիկի պատմության վերաբերյալ կինոժապավեն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 0 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կոշիկի զարգացման փուլերի ներկայացում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կոշիկի տարատեսակները տարբեր երկրներում (մասնավորապես հնագույն հունական և եգիպտական) սանդալները և սանդալետները, 2) ճիշտ է ներկայացնում կոշիկի տարատեսակները Հայաստանում, 3) ճիշտ է ներկայացնում փակ և ճտքավոր կոշիկների զարգացման փուլերը, 4) ճիշտ է ներկայացնում կոշիկի առանձին դետալների ի հայտ գալը և անվանումները, 5) ճիշտ է ներկայացնում կոշիկի մեքենայական տեխնոլոգիայի ծագումը, զարգացումները, 6) ճիշտ է ներկայացնում կոշիկի զարգացման փուլերը Հայաստանում (մասնավորապես 1936 – 1950թթ.):
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով. կոշիկի տարատեսակները Հայաստանում՝ սկսած XVIII դարից մինչև մեր օրերը: Կոշիկի առանձին մասերի ի հայտ գալը և նրանց փոփոխությունները:</p> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հարցերին տալիս է գրագետ և տրամաբանորեն ճիշտ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների ընթացքում: Ուսանողը օգտվում է կոշիկի լաբորատորիայում եղած պլակատներից, սխեմաներից և կոշիկի հավաքածուներից:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տոսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 0 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կոշիկի նշանակության ներկայացում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում առօրյա պայմաններում օգտագործվող կոշիկները (ամենօրյա, մոդելային, տնային, ճանապարհորդական, հանգստի և այլն), 2) ճիշտ է ներկայացնում կոշիկի դասակարգումը ըստ օգտագործման եղանակների,

	3) ճիշտ է ներկայացնում կոշիկի նորաձևության միտումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին տրվում են հարցեր կոշիկի նշանակության և կոշիկի դասակարգման վերաբերյալ: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է պատկերացնում կոշիկի նշանակու- թյունը և դասակարգումը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Անհրաժեշտ է ստուգումը կատարել կոշիկի լաբորատորիայում, որտեղ կան կոշիկի նշանակության վերաբերյալ պլակատներ, ինչպես նաև կոշիկի տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կոշիկի արտադրության կազմակերպման հիմնական գործընթացի ներկայացում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կոշիկի արտադրության կազմակերպման գործընթացը և դրա դերը թեթև արդյունաբերության մեջ, դրա հիմնական փուլերը, 2) ճիշտ է բացատրում կոշիկի արտադրության կազմակերպմանը ներկայացվող պահանջները՝ կախված կոշիկի տեսակից:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Թեման բաժանվում է 4-5 հանգուցային հարցերի և յուաքանչյուր 5 սովորողի տրվում է մեկ հանգուցային հարց: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. – ձևող արտադրամասի դերը և նշանակությունը, – կտրող արտադրամասի դերը և նշանակությունը, – վերնամաս կարող և կոշիկ կարող արտադրամասերի դերը և նշանակությունը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում թվարկված հարցերին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և արտադրական պրոցեսների դիտարկման ընթացքում: Անհրաժեշտ է այցելել որևէ արտադրական ձեռնարկություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 0 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կոշիկի հայրենական արտադրության զարգացման պատմության ներկայացում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կոշիկի հայրենական արտադրության զարգացման պատմությունը, կոշիկի

	<p>հայրենական արտադրության ժամանակակից վիճակը, մրցունակությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում կոշիկի արտադրության ժամանակակից եղանակները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Հարցերը պարունակելու են հիմնական հանգուցային թեմաները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – հայրենական կոշիկի զարգացումը, – հայրենական կոշիկի հեռանկարային զարգացումը և մոդայի ուղղությունը ներկա ժամանակում: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը թվարկված հարցերի ճիշտ է պատասխանում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է հիմնականում տեսական պարապմունքների և իլյուստրացիաների միջոցով: Անհրաժեշտ է պլակատ կոշիկի արտադրության զարգացման վերաբերյալ, ինչպես նաև՝ ամսագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 0 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐԱՖԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գծագրական հմտություններ և կարողություններ:
Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 34 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի գծագրական գործիքները և գծագրի կատարման կանոնները, 2. ճշգրիտ կատարի գծագրական գործիքներով երկրաչափական կառուցումներ, 3. տիրապետի մեքենայական գծագրության տարրերն, 4. կարողանա ընթերցել բանվորական (աշխատանքային) գծագիրը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլն ուսանողի համար համարվում է ավարտված, եթե նա ձեռք է բերել բոլոր արդյունքների կատարողական չափանիշներով նախատեսված հմտություններն ու կարողությունները:
Ուսումնառության արդյունք 1	Գծագրական գործիքների և գծագրի կատարման կանոնների ներկայացում

Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կիրառում գծերի տեսակները, ճիշտ է ընտրում ստանդարտ թղթի չափերը,</p> <p>2) ճիշտ է աշխատում գծագրական գործիքներով,</p> <p>3) գծագրերում կիրառում է մասշտաբները, չափերի նշանակման հիմնական կանոնները՝ պետական ստանդարտներին համապատասխան,</p> <p>4) ճիշտ է կառուցում և լրացնում մասնագիրը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվում է կատարել երկու գրաֆիկական աշխատանք: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը պահպանում է չափերի նշման կանոնները և մասշտաբը: Մասնագիրը լրացնում է ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ նկարչագծագրական պարագաներ, բավարար չափով կահավորված նկարչագծագրական կաբինետ: Նպատակահարման է ուսանողների համար ունենալ քարտ-խնդիրների օրինակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Գծագրական գործիքներով երկրաչափական կառուցումների ճշգրիտ կատարում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բաժանում հատվածը, անկյունը, շրջանագիծը,</p> <p>2) կառուցում է դետալների եզրագծերը,</p> <p>3) ճիշտ է կատարում գծերի սահուն անցումները՝ լծորդումները,</p> <p>4) ճիշտ է կառուցում կորաքանոնային կորեր և դրանք կապում կոշիկի երեսամասի, տակամասի, այլ մասնիկների ձևանների (լեկալների) կառուցման հետ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական աշխատանքների արդյունքների հիման վրա: Ուսանողներին հնաձևարարվում է կատարել երկու գրաֆիկական աշխատանք: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում լրացումները, ճիշտ է կատարում կորաքանոնային կորերը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ձեռքբերումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ կոշիկի դետալների պլակատներ, կորաքանոններ և գծագրական անհրաժեշտ պարագաներ: Կարելի է ունենալ անավարտ քարտ-առաջադրանքներ, որոնց վրա ուսանողը կատարում է լրացումներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 0 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 8 ժամ</p>

Ուսումնառության արդյունք 3	Մեքենայական գծագրության տարրերի տիրապետում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կազմում էսքիզի կատարման հերթականությունը և կարգը, 2) ճիշտ է կատարում չափագրումը գծագրի վրա, 3) ճիշտ է կատարում քանդվող միացումների դետալների աշխատանքային գծագրերը, 4) ճիշտ է կատարում անցումները՝ տիպային դետալի բնօրինակից էսքիզին, այնուհետև՝ բանվորական գծագրին և հակառակը, 5) ճիշտ է կատարում քանդվող միացումների տարրերի պայմանական նշանները, 6) ճիշտ է նշում թույլատրելի շեղվածքները գծագրի վրա:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարավում է կատարել երկու գրաֆիկական առաջադրանք: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է էսքիզից անցնել բանվորական գծագրին և հակառակը, գծագրի չափադրումը կատարվում է անսխալ: Կարելի է ունենալ անավարտ քարտ-առաջադրանքներ, որոնց վրա ուսանողը կատարում է լրացումներ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ կահավորված գծագրական կաբինետ և բավարար քանակի տիպային դետալներ ու պլակատներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Բանվորական (աշխատանքային) գծագրի ընթերցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում թույլտվածքները և մաքրության դասի նշանակումները, 2) ճիշտ է ընթերցում հավաքական գծագիրը և նրա մասնագիրը, ճիշտ է բացատրում կատարած աշխատանքը 3) ճիշտ է կատարում քանդվող միացումների գծագրի մասնատումը, 4) ճիշտ է կատարում մասնատված դետալի աշխատանքային գծագիրը (պրոյեկցիաներ, հատույթներ, կտրվածքներ, աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ):
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին տրվում են հավաքական գծագրերի օրինակներ, հանձնարավում է կարդալ բանվորական գծագիրը և կատարել տիպային դետալների աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը անթերի կարդում է գծագիրը և առանց էական թերությունների կատարում է պրոյեկցիաները:
Մեթոդաբանությունը և	Արդյունքը ձեռք է բերվում գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տիպային դետալների

ռեսուրսները	հարուստ հավաքածու, գծագրերի պլակատներ, գծագրական սեղաններ և անհրաժեշտ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ և ձևավորել հմտություններ՝ կազմակերպելու ու նախապատրաստելու կոշիկի պատրաստման և նորոգման աշխատանքային տեղը:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական ուսուցում՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողին նախնական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. նախապատրաստի կոշիկի պատրաստման համար անհրաժեշտ աշխատանքային տեղը, 2. իրականացնի աշխատանքային տեղի կազմակերպումը՝ անհատական պատվերի կամ զանգվածային արտադրության ժամանակ, 3. նախապատրաստի կոշիկների նորոգման համար նախատեսված աշխատանքային տեղը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կոշիկի պատրաստման համար անհրաժեշտ աշխատանքային տեղի նախապատրաստում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում աշխատանքային սեղանը և որոշում դրա դիրքը, 2) ճիշտ է ընտրում աշխատանքի համար անհրաժեշտ մեքենասարքավորումը, աշխատանքային գործիքները և դրանք ճիշտ դասավորում հարմարավետ դիրքում,
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է աշխատանքային տեղի նախապատրաստման, մեքենան նախապատրաստելու, աշխատանքային գործիքների դասավորման վերաբերյալ գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է ընտրում մեքենան տվյալ օպերացիայի համար և այն գործիքները, որոնք օգտագործելու է կոշիկը կարելիս:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքը ձեռք է բերվում տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Կոշիկի լաբորատորիայում պետք է լինի վերնամաս կարող և վրաքաշման շրջակարման մեքենաներ: Բանվորական սեղանը

	պետք է ունենա անհատական լուսավորվածություն և գործիքների տեղադրման հարկաբաժին:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Աշխատանքային տեղի կազմակերպումը՝ անհատական պատվերի կամ զանգվածային արտադրության ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տեղավորում կոշիկի պատրաստման համար անհրաժեշտ հիմնական ու օժանդակ նյութերը 2) ճիշտ է տեղադրում աշխատանքային գործիքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր բանվորական տեղի կազմակերպման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – զանգվածային արտադրության ժամանակ ձևող բանվորի բանվորական տեղի կազմակերպում, – կոշիկ կարող բանվորի բանվորական տեղի կազմակերպում: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հարցերին տալիս է ճիշտ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ստուգումը կատարել կոշիկի լաբորատորիայում կամ որևէ կոշիկի ֆաբրիկայում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կոշիկների նորոգման համար նախատեսված աշխատանքային տեղի նախապատրաստում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում և դասավորում կոշիկի նորոգման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ մեքենասարքավորումները, գործիքներն ու հարմարանքները, 2) ճիշտ է կատարում մեքենասարքավորումների տեխնիկական վիճակի ստուգումը, դրանք պատրաստում աշխատելու համար, 3) ճիշտ է ընտրում և դասավորում կոշիկների նորոգման համար անհրաժեշտ հիմնական ու օժանդակ նյութերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի միջոցով: Ուսանողը էսքիզի տեսքով պետք է գծի կոշիկը, վերանորոգող բանվորի բանվորական տեղը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների, ինչպես նաև կոշիկի վերանորոգման պրոցեսների դիտարկման միջոցով: Անհրաժեշտ է այցելել կոշիկի վերանորոգման սրահ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՇԻԿԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ»

Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-004
Մոդուլի նպատակը	Սովորողին ծանոթացնել ժամանակակից կոշիկների համարային չափսերին, դրանց ամրացման եղանակներին և օգտագործման բնագավառին:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի ժամանակակից կոշիկի դասակարգումը (ըստ նշանակության, տեսքի, սեռի և տարիքի), 2. ներկայացնի տակացուի ամրացման եղանակները և վերնամասի նյութերի հատկությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ժամանակակից կոշիկի դասակարգման ներկայացում (ըստ նշանակության, տեսքի, սեռի և տարիքի)
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում կոշիկը ըստ նշանակության, 2) ճիշտ է դասակարգում կոշիկը ըստ տեսքի, 3) ճիշտ է դասակարգում կոշիկը ըստ սեռի և տարիքի:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին տրվելու են ժամանակակից կոշիկի դասակարգման վերաբերյալ հարցեր: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – կոշիկի դասակարգումը ըստ նշանակության, – կոշիկի դասակարգումը ըստ տեսքի, – կոշիկի դասակարգումը ըստ սեռի և տարիքի: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա թվարկված հարցերին տալիս է հիմնականում ճիշտ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է հիմնականում տեսական և գործնական պարապմունքների, կինոժապավենների դիտման միջոցով: Անհրաժեշտ են պլակատներ, սխեմաներ և մեծ քանակությամբ տարբեր կառուցվածքների կոշիկների տեսականի:
Ուսուցման երաշխավորված	Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Ժամաքանակը	Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տակացուի ամրացման եղանակների և վերնամասի նյութերի հատկությունների ներկայացում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում ծանր տիպի կոշիկների երեսացուի կաշին,</p> <p>2) ճիշտ է ընտրում տակացուի կոշտ կաշվե մասերը,</p> <p>3) ճիշտ է ընտրում քրոմային կաշին մոդելային և ամենօրյա կոշիկների համար,</p> <p>4) ճիշտ է ընտրում աստառացուի կաշին:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր՝ կոշիկի դասակարգման վերաբերյալ՝ ըստ տակացուի ամրացման և նյութերի առանձնահատկությունների:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – կոշիկի դասակարգումն ըստ տակացուն վերնամասի հետ ամրացման, – հիմնական նյութերի կառուցվածքը (քրոմային կաշիներ և տակացու կոշտ կաշիներ): <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պատասխաններում ուսանողը էական բացթողումներ թույլ չի տալիս, ճիշտ է թվարկում ամրացման միջոցները և նյութերի հատկությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների ընթացքում: Անհրաժեշտության դեպքում պետք է այցելել որևէ գործող կոշիկի ձեռնարկություն: Գործնական ուսուցումը պետք է անցկացնել կոշիկի լաբորատորիայում, որտեղ կան մեծ քանակությամբ կաշվի նմուշներ և կոշիկների տեսականի:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 4 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ՈՏՆԱԹԱԹԸ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-005
Մոդուլի նպատակը	Սովորողին տալ գիտելիքներ ոտնաթաթի կառուցվածքի և կաղապարների նախագծման միջև գոյություն ունեցող սերտ կապի վերաբերյալ
Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 28 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-004 «Կոշիկի դասակարգում» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

	<ol style="list-style-type: none"> ներկայացնի ոտնաթաթի մկանային ֆունկցիան և ոտնաթաթի կառուցվածքի շեղումները, կատարի ոտնաթաթի չափումներ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ոտնաթաթի մկանային ֆունկցիայի և ոտնաթաթի կառուցվածքի շեղումների ներկայացում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> ճիշտ է ներկայացնում ոտքի մասերը՝ մկանային, ոսկրային և հողային կառուցվածքը, ճիշտ է ներկայացնում ոտնաթաթի ոսկորների տեղաբաշխումը, ճիշտ է ներկայացնում ոտնաթաթի անատոմիան և ֆիզիոլոգիան, ճիշտ է ներկայացնում ոտնաթաթի նորմալից շեղումները, ճիշտ է ներկայացնում մարդու ոտնաթաթի գործունեությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու ցուցադրման միջոցով: Արդյունքի ուսումնասիրման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – ոտքի մասերը՝ մկանային, ոսկրային և հողային, – ոտնաթաթի անատոմիան և ֆիզիոլոգիան, – ոտնաթաթի տծնությունները և ոտնաթաթի գործունեությունը: <p>Ուսանողը պետք է ցուցապաստառի վրա ճիշտ ցույց տա ոտքի մասերը՝ թվելով ոտնաթաթի ոսկորների քանակը և ներկայացնելով ոտնաթաթի անատոմիան և ֆիզիոլոգիան, ինչպես նաև թվարկի տծն ոտնաթաթի առաջացման պատճառները: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հանձնարականը հիմնականում ճիշտ է կատարում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է հիմնականում տեսական և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ պլակատներ ոտնաթաթի տոպոգրաֆիայի, կմախքի և հողերի ու հողակապերի վերաբերյալ:</p> <p>Ուսուցումը կատարվում է մասնագիտական կաբինետում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Ոտնաթաթի չափումների կատարում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> ճիշտ է կատարում ոտնաթաթի չափումը՝ տարբեր բարձրության կոշիկներ պատրաստելիս, ճիշտ է օգտվում չափային տիպային օրենքներից, ճիշտ է կատարում մարդու ոտնաթաթի չափումները ըստ մոդելի, ճիշտ է կատարում չափումները ոչ ստանդարտ ոտնաթաթերի դեպքում:

Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական անհատական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ուտնաթաթի չափում 4-5 տեսակի կոշիկների համար: Բացի սովորական չափումից, ուսանողը պետք է կարողանա ուտնաթաթը չափել չափիչ սարքով (Стопомер): Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա չափումներում էական բացթողումներ թույլ չի տվել (չափման բոլոր անատոմիական կետերից):
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է հիմնականում գործնական և տեսական պարապմունքների միջոցով: Ուսուցումը կատարվում է մասնագիտական կաբինետում: Պետք է լինի ուտնաթաթի կմախք, չափիչ սարք /стопмер/, կաղապարներ, չափիչ ժապավեն, մատիտ, կոշիկների և կաղապարների տեսականի և պլակատներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 14 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՇԻԿԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-006
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ զարգացնել օգտագործվող կաղապարների ճիշտ ընտրության կարողություն:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական ուսուցում՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-004 «Կոշիկի դասակարգում», ԿՇԿ-3-13-005 «Մարդու ուտնաթաթ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ճիշտ ընտրի կաղապարներն ըստ նշանակության, 2. կարողանա օգտագործել հիմնական և օժանդակ կաղապարները, 3. տարբերակի կաղապարի սեռային, տարիքային հատկանիշները և քթամասի կառուցվածքը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ճիշտ ընտրել կաղապարներն ըստ նշանակության
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում կաղապարներն ըստ նշանակության,

	2) ճիշտ է հիմնավորում կաղապարների գիրություններն ամենօրյա և ծանր տիպի կոշիկների համար:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին տրվելու են կաղապարների դասակարգման խմբերի և տեսականու մասին հարցեր: Հանձնարարվելու է ընտրել տարբեր կաղապարներից մեկը, ըստ կոշիկի կառուցվածքի: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – կաղապարների դասակարգումը ըստ նշանակության, – կաղապարներ ամենօրյա և ծանր տիպի կոշիկների համար: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին և ընտրում համապատասխան կաղապարը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է հիմնականում տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Դասի կահավորման կազմում անհրաժեշտ է ունենալ կաղապարներ, պլակատներ, կոշիկի սեռատարիքի նմուշատեսակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Հիմնական և օժանդակ կաղապարների օգտագործում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հիմնական և օժանդակ կաղապարները, 2) ճիշտ է տարբերակում կոշիկների սեռային, տարիքային խմբերը, 3) ժամանակակից նորաձևությանը համապատասխան ճիշտ է ընտրում կաղապարը (ըստ քթամասի ձևի), 4) ճիշտ է ընտրում ոչ ստանդարտ ոտնաթաթերի համար անհրաժեշտ քթամասով կաղապարներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Խումբը մեծ լինելու դեպքում այն պետք է բաժանել 4-5 ենթախմբերի: Յուրաքանչյուր խմբին տրվում են տարբեր հարցեր ծրագրային մանրամասներից: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – հիմնական և օժանդակ կաղապարների բնութագրում, – կաղապարներ ոչ ստանդարտ ոտնաթաթերի համար, – նորաձևությունից ելնելով կաղապարների օգտագործումը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա տվել է ճիշտ պատասխաններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքը ձեռք է բերվում տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Դասի կահավորման կազմում անհրաժեշտ է ունենալ կաղապարներ տարբեր սեռատարիքի և ոչ ստանդարտ ոտնաթաթերի համար: Կրինետում պետք է լինեն

	կաղապարների կառուցվածքների վերաբերյալ պլակատներ և կաղապարների տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կաղապարի սեռային, տարիքային հատկանիշների և քթամասի կառուցվածքների տարբերակում:
Կատարման չափանիշներ	1) ճանաչում է կաղապարներն ըստ նյութերի, 2) ճիշտ է տարբերակում կաղապարներն ըստ սեռի, տարիքի, 3) ճիշտ է ներկայացնում կաղապարների քթամասի կառուցվածքի ձևերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային և գործնական աշխատանքի միջոցով: Թեստում ներառել հարցեր կաղապարների արտադրության համար նյութերի ցանկի և կաղապարների անվանումների վերաբերյալ: Ուսանողը պետք է ընտրի կոշիկին համապատասխան կաղապարը (ըստ սեռի, տարիքի և քթամասի կառուցվածքի): Գործնականի ընթացքում բանավոր հարցերով կարելի է ստուգել պատասխանների հիմնավորումները: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ստուգումը կատարել կոշիկի ուսումնաարտադրական արհեստանոցում, որտեղ կա կոշիկի կաղապարների հարուստ տեսականի
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՇԻՆԵՐ, ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-007
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել կոշիկի արտադրությունում նյութերի ճիշտ օգտագործման կարողություն:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 20 Գործնական ուսուցում՝ 34
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-001 «Մասնագիտության հիմունքներ (կոշիկի զարգացման պատմություն)» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի կոշիկի արդյունաբերության մեջ քրոմային և աստառացու կաշիների օգտագործման բնագավառները,

	<p>2. ճիշտ օգտագործի անհատական և մասսայական եղանակներով կոշիկ արտադրելիս (կարելիս) տակացու կաշիները,</p> <p>3. կարողանա գործվածքներն օգտագործել ըստ տեսակի,</p> <p>4. կոշիկի վերնամասերի համար օգտագործի արհեստական կաշիներ,</p> <p>5. ներկայացնի կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող երեսացու և տակացու արհեստական կաշիների օգտագործման բնագավառները:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարմակարողակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կոշիկի արդյունաբերության մեջ քրոմային և աստառացու կաշիների օգտագործման բնագավառների ներկայացում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում երեսացու և աստառացու կաշին,</p> <p>2) ճիշտ է ընտրում կաշին քրոմային և յուխտային կոշիկներ կարելիս:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստի գնահատման հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող քրոմային և աստառացու կաշիների առանձնահատկությունների մասին, թեստում ընդգրկվելու են հարցեր այդ նյութերի տարբերակման կարողությունները և օգտագործման բնագավառները բացահայտելու ուղղությամբ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – կոշիկի երեսացու քրոմային կաշիների ընդհանուր բնութագրում, – յուխտային կաշիների ստացումը և օգտագործման բնագավառները, – աստառացու կաշիների հումքը և նրանց առանձնահատկությունները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պատասխաններում ուսանողը ճիշտ է թվարկում քրոմային և յուխտային կաշիների օգտագործման բնագավառները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների ընթացքում: Անհրաժեշտ է դասերի ընթացքում հաճախել կաշվի գործարան և կոշիկի ֆաբրիկա:</p> <p>Միաժամանակ գործնական բոլոր ժամերը պետք է անցկացնել ուսումնաարտադրական արհեստանոցում, որտեղ կաշիների հարուստ տեսականի կա:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Անհատական և մասսայական եղանակներով կոշիկ արտադրելիս (կարելիս) տակացու կաշիների ճիշտ օգտագործում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում ներբանային կաշին,

	<p>2) ճիշտ է ընտրում միջնատակային և ռանտային կաշին,</p> <p>3) ճիշտ է ընտրում ձիու, խոզի մորթիներից ստացված կաշիները,</p> <p>4) ճիշտ է ընտրում կիսաճտքավոր կարելու համար նախատեսվող կաշին:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Խմբի ուսանողներին պետք է բաժանել 2-3 ենթախմբերի թեմայի յուրացումը և գնահատումը հեշտ լինելու համար: Ուսանողը գործնական ժամերին պետք է պատրաստի ալբոմ, որտեղ պետք է լինեն կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող կոշտ կաշիների նմուշները, բնութագրի նրանց առանձնահատկություններն ու օգտագործման բնագավառները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – ներբանային կաշիների ստացումը և առանձնահատկությունները, – միջնատակային կաշիների ստացումը և առանձնահատկությունները, – կաշիները ռանտների համար: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա նշված նյութերի բնութագրման և օգտագործման հարցում տալիս է ճիշտ պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է դասերի հիմնական մասն անցկացնել կաշվի գործարանում և կոշիկի ֆաբրիկայում՝ ծանոթանալու կաշվի արտադրությանը և տակացու կոշտ կաշիների օգտագործմանը:</p> <p>Արտադրական արհեստանոցում պետք է լինի կոշտ կաշվյա տակացուով կոշիկների տեսականի:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Գործվածքների օգտագործում ըստ տեսակի
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է դասակարգում գործվածքները,</p> <p>2) ճիշտ է ընտրում ձմեռային կոշիկ կարելու համար նախատեսվող գործվածքը,</p> <p>3) ճիշտ է ընտրում և օգտագործում բամբակե գործվածքը ըստ կոշիկի տեսակի,</p> <p>4) ճիշտ է ընտրում միջնաստառացու գործվածքը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող տեքստիլ գործվածքների առանձնահատկությունների, նյութերի տարբերակման և օգտագործման բնագավառները բացահայտելու վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի ըստ կոշիկի</p>

	<p>նշանակության ընտրել գործվածքը և հիմնավորել ընտրությունը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - կոշիկի վերնամասի համար օգտագործվող գործվածքների տեսականին (ասորտիմենտը) և նրանց որակական բնութագիրը, - կոշիկի աստառացու գործվածքների կառուցվածքը, - կոշիկի վերնամասի միջանկյալ գործվածքների կառուցվածքը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պատասխաններում ուսանողը ոչ մի բացթողում թույլ չի տալիս, ճիշտ է թվարկում բամբակյա, բրդյա և սինթետիկ եղանակով ստացված գործվածքների հատկությունները և ճիշտ է հիմնավորում ընտրությունը:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների ընթացքում: Անհրաժեշտ է փորձնական լաբորատորիայում ստուգել գործվածքների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները: Հարմար է գործնական պարապմունքները անցկացնել գործվածքներ արտադրող ձեռնարկություններում:</p> <p>Պետք է լինեն այլոսներ գործվածքների ասորտիմենտի վերաբերյալ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Կոշիկի վերնամասերի համար արհեստական կաշիների օգտագործում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է օգտագործում արհեստական լաքը, 2) ճիշտ է օգտագործում արհեստական թավիշը, 3) ճիշտ է օգտագործում արհեստական կիրզան և շարգալինը, 4) ճիշտ է օգտագործում տեքստովինիտը, սովինոլը և վրակալիումը, 5) ճիշտ է օգտագործում կոշիկի գրանիտոլը և մոֆարինը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը կատարվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարավելու է կոշիկին համապատասխան ընտրել արհեստական կաշիները՝ բնութագրելով դրանց որակը և ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - վերնամասի համար օգտագործվող գործվածքների որակի և տեսականու իմացություն, - կոշիկի կոշտ քթամասի և կրնկամասի համար արհեստական և սինթետիկ նյութերի որակի և տեսականու իմացություն: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա թվարկված հարցերին ճիշտ է պատասխանում:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների, արտադրական պրոցեսների դիտարկման ընթացքում: Անհրաժեշտ է այցելել արհեստական կաշիների արտադրման ձեռնարկություն:</p> <p>Գործնական պարապմունքների անցկացման լաբորատորիայում պետք է լինեն ալբոմներ արհեստական կաշիների տեսականու վերաբերյալ և արհեստական կաշվից պատրաստված կոշիկների նմուշներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Ներկայացնել կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող երեսացու և տակացու արհեստական կաշիների օգտագործման բնագավառները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տարբերում է բնական և արհեստական կաշիները, 2) ճիշտ է բնութագրում երեսացու և տակացու կաշիների տարբերությունը, 3) ճիշտ է ներկայացնում արհեստական կաշիներից ստացված պատրաստի մասերի բնութագրերը և դրանց օգտագործման բնագավառները, 4) ճիշտ է ընտրում մոդելին համապատասխան կաշվե նյութերը՝ հաշվի առնելով նորաձևության պահանջները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և փորձնական նմուշների բնութագրման միջոցով: Ուսանողը պետք է կարողանա դասակարգել դիտարկվող նմուշները և բնութագրի արհեստական կաշիների նշանակությունը և կիրառման բնագավառները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – արհեստական կաշիների կիրառման անհրաժեշտ բնագավառները, – արհեստական կաշիների ստացման եղանակները, – սինթետիկ եղանակով ստացված արհեստական կաշիների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները և կիրառման բնագավառները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե հանձնարարականը հիմնականում կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ընթացքում հաճախել կոշիկ կարող և արհեստական կաշի արտադրող ձեռնարկություններ՝ ծանոթանալու օգտագործվող արհեստական կաշիների հատկությունների հետ:</p> <p>Կաբինետում պետք է լինի պլակատ արհեստական կաշիների արտադրման վերաբերյալ և նմուշների ալբոմներ: Անհրաժեշտ է նաև արհեստական կաշիներից կոշիկների տեսականի:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-008
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել կոշիկի արտադրման տեխնոլոգիական գործընթացներին և տեխնիկայի կանոններին տիրապետելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ Տեսական ուսուցում՝ 20 ժամ Գործնական ուսուցում՝ 52 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-006 «Կոշիկի կաղապարներ», և ԿՇԿ-3-13-007 «Կոշիկի արտադրության մեջ օգտագործվող կաշիներ, այլ նյութեր» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ol style="list-style-type: none"> 1. կոշիկ կարելու համար ընտրի երեսացու, աստառացու և տակացու նյութեր, 2. մշակի կոշիկի տակացու և երեսացու մասերը, 3. կարի կոշիկի վերնամասը, 4. կաղապարի վրա ձևավորի վերնամասը, 5. կատարի ձևավորման վերջնական գործողություններ, 6. ամրացնի կրունկները և կրնկակապերը, 7. ներկայացնի կոշիկի հարդարումը, 8. ներկայացնի արտադրանքի վերջնական տեսքը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կոշիկ կարելու համար երեսացու, աստառացու և տակացու նյութերի ընտրություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում նյութերի ձևման և կտրման տարբերակները, 2) ճիշտ է կատարում է նյութերի ձևումը և կտրումը, 3) ճիշտ է օգտագործում կաշվի տեղադրական մասերը, 4) նյութերն արդյունավետ է օգտագործում:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողը պետք է պատրաստի կոշիկ կարելու համար՝ երեսացու, աստառացու և տակացու նյութերի հավաքածու (ըստ առաջադրանքի և կարողանա ճիշտ նշել նրանց օգտագործման բնագավառը):</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - նյութերի ձևման և կտրման տարբերակները, - նյութերի ձևումը ձեռքով և մեքենայով, - նյութի ռացիոնալ օգտագործում: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է ձևում նյութը, իմանում է պատասխանատու, քիչ պատասխանատու և ոչ պատասխանատու մասերը, ռացիոնալ է օգտագործում նյութի մակերեսը:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսանողը օգտվում է կոշիկի արհեստանոցում թողած նյութերից: Նպատակահարմար է պարապմունքների մի մասը անցկացնել կոշիկի ֆաբրիկայում, կոնկրետ ծանոթանալու ձևման և կտրման օպերացիաների հետ: Պետք է լինի դանակ, սալիկ, կտրիչներ և մեքենաներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Կոշիկի տակացու և երեսացու մասերի մշակում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում տակացու մասերի շերտավորում, հղկում և ձևավորում, 2) տարբեր միացման մեթոդներով կոշտ միջնատակի մշակում, 3) ճիշտ է կատարում կաշվից կամ ռետինից ներբանի մշակում, 4) ճիշտ է կատարում կաշվից կամ ռետինից կրունկների մշակում, 5) ճիշտ է կատարում կոշիկի երեսացու և աստառացու մասերից մշակում (եզրերի թրաշում, միջաստառների ամրացում և եզրերի ծալում):
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը պետք է կատարի կոշիկի երեսացու և տակացու մասերի մշակում ձեռքով կամ մեքենայով՝ նկարագրելով նրանց առանձնահատկությունները և օգտագործման բնագավառները և պահպանելով տեխնոլոգիական նորմատիվները:</p> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է մշակում դետալները, կարողանում է մշակումը կատարել ձեռքով կամ մեքենայով՝ պահպանելով տեխնոլոգիական նորմատիվները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ուսուցումը կատարել կոշիկի արհեստանոցում կամ էլ այցելել կոշիկի ֆաբրիկա: Պետք է լինի՝ դանակ, հղքաթուղթ, սոսինձ և դետալների մշակման մեքենաներ:
Ուսուցման երաշխավորված ժամանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կոշիկի վերնամասի կարում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում ասեղը, թելը և կարատեսակները, 2) ճիշտ է կատարում ոլոկամասի և աստառի հավաքումը, 3) ճիշտ է միացնում ոլոկամասը աստառին, 4) ճիշտ է կարում աստառը միացնող մասի հետ, 5) ճիշտ է կատարում հետնամասի և առաջամասի հանգույցների միացումը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին տրվում են հարցեր կոշիկի վերնամասի (զագատովկայի) հավաքման տեխնոլոգիական հաջորդականության մասին: Ստուգումը և գնահատումը ճիշտ լինելու համար խումբը բաժանվում է 4 -5 ենթախմբերի, յուրաքանչյուրին տրվում է 2 – 3 կառուցվածքների պարզ և բարդ վերնամասերի կարում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – Վերնամասի հիմնական և օժանդակ նյութերի դասակարգումը – Ճիշտ է ընտրում ասեղը և թելը – Կարաբաժինների պահպանման խնդիրները – Ոլոկամասի և աստառի հավաքման եղանակները – Աստառի հավաքման եղանակները – Ոլոկամասի և առաջնամասի հանգույցների հավաքում – Խոտանի առաջացման պատճառները և վերացման ուղիները – Աշխատանքի անվտանգության ապահովման խնդիրները – Մեքենայի նախապատրաստման աշխատանքին <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե նա տիրապետում է մեքենայի կարատեսակների կատարման տեխնոլոգիային, առանց էական թերությունների և ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
Մեթոդաբանությունը և	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով:

ռեսուրսները	Գործնական աշխատանքները կատարվում են կոշիկի լաբորատորիայում, որտեղ պետք է լինի տարբեր կառուցվածքների կարի մեքենաներ, ասեղ, թել և օժանդակ նյութեր: Նպատակահարմար է այցելել նաև կոշիկի ֆաբրիկա:
Ուսուցման երաշխավորված ժամանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կաղապարի վրա վերնամասի ձևավորում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում կաղապարը, 2) ճիշտ է կատարում վերնամասի վրաքաշ (ձեռքով կամ մեքենայով), 3) ճիշտ է կատարում քթամասի, մեջքի մասի և կրնկամասի շրջաքաշումը(ձեռքով կամ մեքենայով):
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր արտադրամասում կամ բանվորական տեղում օգտագործվող սարքավորումների տեխնոլոգիական բնութագրերի մասին: Ուսանողին հանձնարարվելու է նախապատրաստել կաղապարը վերնամասի վրաքաշմանը և շրջաքաշմանը, իրականացնել վրաքաշում և շրջաքաշում ձեռքով և մեքենայով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – կոշիկի արդյունավետության մեջ օգտագործվող կաղապարների դասակարգումը, – կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող վրաքաշման և շրջաքաշման մեքենասարքավորումների դասակարգումը, – նրանց շահագործման կարողությունների ձեռքբերումը, – անվտանգության կանոնների պահպանումը, – մեքենաների և սարքավորումների տեխնիկական պարամետրերի իմացություն, – վերնամասի ձևավորումը ձեռքի աշխատանքով: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը պատասխանում է հարցերին և ճիշտ է կատարում հանձնարարականը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողը պետք է այցելի գործող կոշիկի ֆաբրիկա և տեղում ուսումնասիրի մեքենաները և սարքավորումները: Տեսական պարապմունքները պետք է անցկացնել կաթինետում, որտեղ պետք է լինեն պլակատներ մեքենաների կինեմատիկ կառուցվածքների վերաբերյալ:
Ուսուցման երաշխավորված ժամանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 8 ժամ

Ուսումնառության արդյունք 5	Ձևավորման վերջնական գործողությունների կատարում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում կոշիկի հետքի նախապատրաստումը,</p> <p>2) ճիշտ է կատարում սոսնձապատման աշխատանքները, պահպանում է ռեժիմները,</p> <p>3) ճիշտ է ամրացնում ներբանը, կարողանում է աշխատել մեքենայի վրա,</p> <p>4) ճիշտ է ձուլում կոշիկի տակացուն համապատասխան սարքավորման օգնությամբ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և տրված առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր կոշիկի վերնամասի վերջնական ձևավորման գործողությունների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի իրականացնել կոշիկի ձևավորման վերջնական աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – կոշիկի հետքի մշակման տեխնոլոգիան, – կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործված սոսինձների տեսակներն ու ռեժիմները, – մեքենայի նախապատրաստումը աշխատանքի, – ձևավորման սարքավորումների դասակարգումը, – պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները, – կարողանում է վերացնել պարզագույն խափանումները, – ոտ մեքենայական աշխատանքի գործնական կարողություններ: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը պատասխանում է հարցերին և ճիշտ է կատարում հանձնարարականը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովել գործիքներով, մեքենասարքավորումներով, յուղով և մասնագիտական գրականությամբ: Նպատակահարմար է այցելել գործող կոշիկի ֆաբրիկա՝ տեղում ծանոթանալու տեխնոլոգիական անցումների հետ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	Կրունկների և կրնկակապերի ամրացում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ամրացնում կաշվից և ռետինից կրունկները,</p> <p>2) ճիշտ է ամրացնում պլաստմասայից և փայտից կրունկները՝ օգտագործելով ժամանակակից սարքավորումները:</p> <p>3) ճիշտ է կատարում կրնկակապերի ամրացումը:</p>

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա գործարկել կոշիկի կրունկների և կրնկակապերի ամրացման մեքենան և կատարել տեխնոլոգիական պրոցեսնորը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - գիտի կրունկների և կրնկակապերի ամրացման տեխնոլոգիան, - օժանդակ սարքավորումների գործարկման կարողությունները, - պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները, - կրունկների և կրնկակապերի ամրացման մեքենաների տեսակները, - մանր մեխանիզացիայի սպասարկման կարողություն: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է գործարկել մեքենան և ճիշտ կատարել տեխնոլոգիական պրոցեսը առանց թերությունների:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Նպատակահարմար է գործնական պարապմունքներն անցկացնել գործող կոշիկի ֆաբրիկայում: Տեսական ուսուցման ժամանակ պիտի լինեն պլակատներ մեքենաների կինեմատիկ կառուցվածքների վերաբերյալ: Պետք է լինի գրականություն և ամսագրեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 7</p>	<p>Կոշիկի հարդարման ներկայացում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է կատարում կոշիկի տակացու և երեսացու մասերի հարդարումը, 2) ճիշտ է ընտրում վերնամասի համար պահանջվող հարդարող նյութերը, 3) ճիշտ է ընտրում տակացու մասերի համար օգտագործվող օժանդակ նյութերը և ներկերը:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա ճիշտ բնութագրի կոշիկի հարդարման տեխնոլոգիական պրոցեսները և գործարկի հարդարման ժամանակ օգտագործվող մեքենաները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - օժանդակ հարդարող նյութերի կարողությունները և ռեժիմները, - հարդարման մեքենաների նախապատրաստական աշխատանքներին, - ձեռքով հարդարման կարողություն, - մանր մեխանիզացիայի սպասարկման կարողություն, - աշխատանքի անվտանգության ապահովումը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է գործարկել մեքենան և</p>

	անթերի կատարել հարդարման օպերացիաները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական փոքր մասով և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովել հարդար նյութերով, սարքավորումներով, մասնագիտական գրքերով և ամսագրերով: Կազմակերպել էքսկուրսիա կոշիկի ֆաբրիկա:
Ուսուցման երաշխավորված ժամանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 8	Արտադրանքի վերջնական տեսքի ներկայացում
	1) ճիշտ է կատարում քուղերի անցկացումը և ճարմանդի փակումը, 2) վերացնում է կարման ժամանակ առաջացած թերությունները, 3) ճիշտ է կատարում կոշիկի փաթեթավորումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարության միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է ըստ կոշիկի տեսակի կատարել հարդարման վերջնական գործողություններ և վերավցնել կարման ընթացքում առաջացած թերությունները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – օգտագործվող քողերի և ճարմանդների որակի և տեսականու իմացություն, – կարման ժամանակ առաջացված փոքր թերությունների առաջացման պատճառները և վերացման ուղիները: Ուսանողի կողմից արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե նա առանց էական թերությունների կատարում է առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Դասի կահավորման կազմում անհրաժեշտ է ունենալ՝ տուփեր, քողեր, ճարմանդներ և սարքավորում: Լաբորատորիայում պետք է լինի մասնագիտական գրականություն և ամսագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՇԻԿԻ ՎԵՐՆԱՄԱՍԻ ԵՎ ՏԱԿԱՄԱՍԻ ՀԱՎԱՔՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-009
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել կոշիկի վերնամաս կարելու կամ ձևափոխելու, կարածոն նորոգելու և մշակելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ Տեսական ուսուցում՝ 20 ժամ

	Գործնական ուսուցում՝ 52 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-006 «Կոշիկի կաղապարներ», ԿՇԿ-3-13-008 «Կոշիկի արտադրման տեխնոլոգիական գործընթացների կատարում» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. մշակի կոշիկի վերնամասի դետալները, 2. կատարի հետնամասի հավաքում, 3. կատարի միացնող մասի հանգույցի հավաքումը և միացումը հետնամասի հանգույցին, 4. ձևավորի կոշիկի վերնամասը, 5. կատարի կոշիկի տակացու մասերի ամրացումը և հարդարումը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կոշիկի վերնամասի դետալների մշակում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է առանձնացնում երեսացու և աստառացու մասերը, 2) ճիշտ է կատարում դետալների եզրերի բարակեցումը, 3) ճիշտ է մշակում դետալների երևացող եզրերը, 4) ճիշտ է ամրացնում միջնաստառները համաձայն տեխնոլոգիական նորմերի:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստի և գործնական առաջադրանքների միջոցով: Թեստը պարունակելու է հարցեր կոշիկի երեսացու և աստառացու նյութերի ֆիզիկամեխանիկական հատկությունների վերաբերյալ: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը պետք է կատարի կոշիկի երեսացու մասերի մշակում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – օգտագործվող նյութերի հատկությունները, – դետալների նախապատրաստումը միացման, – օգտագործվող սոսինձները և նրանց ռեժիմները, – ծավալաձքի բաժնի պահպանման խնդիրները, – մեքենայի նախապատրաստումը և աշխատանքը: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ պատասխաններ է տալիս թեստի հարցերին և կարողանում է աշխատացնել մեքենան և դրանով մշակել կոշիկի երեսացու:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողը պետք է ապահովված լինի դանակով, սոսինձով, մեքենայով և մասնագիտական գրականությամբ: Նպատակահարմար է այցելել գործող կոշիկի ֆաբրիկա տեխնոլոգիական անցումները ուսումնասիրելու:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել հետնամասի հավաքում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում ոլկամասերի հետևի եզրերի միացումը, 2) ճիշտ է կարում հետևի արտաքին գոտին, 3) ճիշտ է ընտրում կեռիկների և փուլակների տեղադրման սարքավորումները, 4) աստառը կարելիս ճիշտ է ընտրում կարատեսակը, 5) ճիշտ է կատարում հետևի հանգույցի հավաքումը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողին տրվելու են հարցեր՝ կոշիկի վերնամասի հավաքման տեխնոլոգիական հաջորդականության մասին: Թեման բաժանվում է 3–4 հանգուցային հարցերի և յուրաքանչյուր 4–5 սովորողի տրվում է մեկ հանգուցային հարց: Ուսանողին հանձնարարվելու է կատարել ոլկամասերի հետևի եզրերի միացում, կարել հետևի արտաքին գոտին և աստառը, իրականացնել հետևի հանգույցի հավաքում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – հետնամասի հիմնական և օժանդակ մասերի դասակարգումը, – հետնամասի համար նախատեսված օժանդակ նյութերը և ֆուրնիտուրաները, – մեքենայի նախապատրաստումը աշխատանքի, – մեքենայական կարատեսակների որակի հսկման անհրաժեշտությունը, – պարզագույն թերությունների առաջացման պատճառները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա տիրապետում է հետնամասի հավաքման աշխատանքներին և ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովվել՝ տարբեր դասերի կարի մեքենաներով, ասեղներով, թելերով, յուղով և մասնագիտական գրականությամբ: Լավ կլինի կազմակերպել էքսկուրսիա գործող կոշիկի ֆաբրիկա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Միացնող մասի հանգույցի հավաքումը և միացումը հետնամասի հանգույցին
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում առաջնամասի հավաքումը, 2) ճիշտ է ընտրում մեքենայական կարերը՝ լեզվակը աստառի հետ միացնելիս, 3) ճիշտ է կատարում առաջնամասի և հետնամասի միացումները, 4) ճիշտ է կատարում արտադրանքի մաքրումը թելերից և սոսնձի հետքերից, 5) ճիշտ է կատարում եզրակարերը և ամրակարերը՝ պահպանելով կարաբաժինները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողներին տրվելու են հարցեր՝ կոշիկի վերնամասի միացնող մասի հավաքման և հետնամասի հետ միացման, տեխնոլոգիական նորմատիվների մասին: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը պետք է կատարի երկու հանգույցների մշակում: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – ասեղի և թելի օգտագործումը՝ կախված կաշվի տեսակից և արտադրանքի տեսականուց, – կարաբաժինների պահպանման խնդիրները, – մեքենայի նախապատրաստումը աշխատանքի, – հետնամասի և առաջնամասի հանգույցների միացում, – պարզագույն թերությունների առաջացման պատճառները: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է գործարկել մեքենան և հավաքել կոշիկի վերնամասը, հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պետք է լինի կարի մեքենա, ասեղներ, թելեր մասնագիտական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կոշիկի վերնամասի ձևավորում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում ձևավորման նախնական գործողությունները, 2) ճիշտ է կատարում վրաքաշման և շրջաքաշման գործողությունները,

	<p>3) ճիշտ է պահպանում ծավլող մասերի չափսերը,</p> <p>4) կարողանում է աշխատել վրաքաշման և շրջաքաշման մեքենաների հետ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա գործարկել կոշիկի վերնամասի ձևավորման մեքենաները (վրաքաշման և շրջաքաշման) և կատարել տեխնոլոգիական պրոցեսներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մասնրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – վրաքաշման և շրջաքաշման մեքենաների դասակարգումը, – սարքավորումների տեխնիկական պարամետրերի իմացություն, – վրաքաշման և շրջաքաշման ծավլող բաժինների իմացություն, – պարզագույն թերությունների առաջացման պատժառնները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է ձեռքով կամ մեքենաներով կատարում է վրաքաշ և շրջաքաշ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսուցումը պետք է կատարվի կոշիկի լաբորատորիայում, որտեղ պետք է լինի մեքենաներ, կաղապար, կոշիկի տեսականի, մեքենաների վերաբերյալ կինեմատիկ սխեմաներ և մասնագիտական գրականություն:</p> <p>Անհրաժեշտ է այցելել գործող կոշիկի ֆաբրիկա տեխնոլոգիական անցումները ուսումնասիրելու:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	Կոշիկի տակացու մասերի ամրացումը և հարդարումը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում սոսինձը և պահպանում է օգտագործման ռեժիմները, 2) ճիշտ է կատարում կոշիկի հետքի նախապատրաստումը ամրացմանը, 3) ճիշտ է ընտրում ներբանը ամրացնող սարքավորումները, 4) կարողանում է ճիշտ սահմանված ժամկետում ամրացնել ներբանը, 5) ճիշտ է կատարում տակացուի ստացումը ձուլման եղանակով, 6) ճիշտ է ընտրում հարդարող նյութերը, 7) ճիշտ է կատարում հարդարման վերջնական գործողությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողներին տրվելու են հարցեր կոշիկի տակացու մասերի ամրացման և հարդարման սարքավորումների տեխնիկական բնութագրերի ու</p>

	<p>աշխատանքների մասին: Հանձնարավելու է իրականացնել ներբանի ամրացում մեքենայով կամ ձեռքով, ներբանի եզրերի մաքրում և հարդարման նյութերի օգտագործում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - կոշիկի տակացու մասերի ամրացման հարդարման սարքավորումների դասակարգումը, - կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող սուսինձները և նրանց օգտագործման բնագավառը, - գիտի ներբանը ամրացնող մեքենան և կարողանում է կատարել տեխնոլոգիական պրոցեսները, - կարողանում է վերացնել պարզագույն խափանումները, - օժանդակ սարքավորումների գործնական կարողություն, - կոշիկի հարդարման նյութերի դասակարգումը և նրանց օգտագործման բնագավառը և ռեժիմները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է աշխատել ներբանը ամրացնող տակացուն ձուլող և հարդարող մեքենաների վրա և ճիշտ է կատարում հանձնարարականը:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Լաբորատորիայում պետք է լինի՝ մամլիչներ, հարդարող մեքենա, հարդարող նյութեր, տուփեր և մասնագիտական գրականություն և ամսագրեր:</p> <p>Անհրաժեշտության դեպքում պետք է այցելել գործող կոշիկի ֆաբրիկա:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 12 ժամ</p>
<p>Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»</p>	
<p>Մոդուլի դասիչը</p>	<p>ԿՇԿ-3-13-010</p>
<p>Մոդուլի նպատակը</p>	<p>Ուսանողի մոտ ձևավորել կոշիկի արտադրությունում օգտագործվող մեքենա-սարքավորումներով աշխատելու հմտություններ:</p>
<p>Մոդուլի տևողությունը</p>	<p>36 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 10 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 26 ժամ</p>
<p>Մուտքային պահանջները</p>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-008 «Կոշիկի արտադրման տեխնոլոգիական գործընփացների կատարում», ԿՇԿ-3-13-009 «Կոշիկի վերնամասի և տակամասի հավաքում» մոդուլները:</p>
<p>Ուսումնառության արդյունքները</p>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կատարի.</p> <ol style="list-style-type: none"> 1. նախապատրաստական արտադրամասերի սարքավորումների ընտրություն,

	<ol style="list-style-type: none"> 2. կոշիկի տակացուի և երեսացուի մշակման սարքավորումների ընտրություն, 3. վերնամաս կարող սարքավորումների ընտրություն, 4. վերնամասը ձևավորող սարքավորումների ընտրություն, 5. կոշիկի տակացուի ամրացման և հարդարման սարքավորումների ընտրություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Նախապատրաստական արտադրամասերի սարքավորումների ընտրություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում գործիքները ձևման և կտրման համար, 2) ճիշտ է ընտրում ձևման սարքավորումը և կարողանում աշխատել դրա վրա, 3) ճիշտ է ընտրում սարքավորումը շերտավոր գործվածքներ ձևելու համար, 4) կարողանում է վերանորոգել սարքավորումների թեթև անսարքությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականի միջոցով: Ուսանողը պետք է կարողանա կատարել նախապատրաստական արտադրամասերի սարքավորումների ճիշտ ընտրություն և տալ նրանց տեխնիկական բնութագրերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – մեքենայի նախապատրաստումը աշխատանքի, – պարզագույն թերությունների առաջացման պատճառները, – աշխատանքի անվտանգության ապահովումը, – մանր մեխանիզացիայի սպասարկման կարողություն: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է գործարկել մեքենան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովել գործիքներով, կտրիչներով, ձևող և կտրող սալիկներով: Լաբորատորիայում պետք է լինեն պլակատներ նախապատրաստական արտադրամասերի սարքավորումների վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում պետք է այցելել գործող կոշիկի ֆաբրիկա:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կոշիկի տակացուի և երեսացուի մշակման սարքավորումների ընտրություն
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում կոշիկի երեսացու և տակացու շերտավորող մեքենան,

	<p>2) ճիշտ է ընտրում կոշիկի մասերի եզրերը բարակացնող մեքենան ,</p> <p>3) ճիշտ է ընտրում տակացու մասերի հղկման մեքենան և աշխատում դրա վրա,</p> <p>4) ճիշտ է ընտրում կոշիկի վերնամասի եզրերի սոսնձապատման և ծալման մեքենան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա ընտրել և սպասարկել կոշիկի տակացու և երեսացու մասերի մշակման սարքավորումները և վերացնել պարզագույն թերությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – աշխատանքի անվտանգության կանոնների պահպանում, – տակացու և երեսացու մասերի մշակման սարքերի գործարկման կարողություն, – պարզագույն խափանումների վերացում, – օժանդակ սարքավորումների գործնական կարողություններ: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է անխափան աշխատացնել մեքենան և կատարել որևէ օպերացիա առանց թերությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողը պետք է այցելի գործող կոշիկի ֆաբրիկա և տեղում ուսումնասիրի սարքավորումները:</p>
Ուսուցման երաշխավորված ժամանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Վերնամաս կարող սարքավորումների ընտրություն
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում մեկ և երկու ասեղանի կարի մեքենաները,</p> <p>2) ճիշտ է ընտրում ծանր տիպի կոշիկների վերնամասը կարող մեքենան,</p> <p>3) ճիշտ է ընտրում փոլակները և կեռիկները ամրացնող մեքենաները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա սպասարկել կարի մեքենան և վերացնել պարզագույն թերությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – մեքենայի նախապատրաստումը աշխատանքի, – կոշիկի արտադրամասում օգտագործվող մեքենասարքավորումների դասակարգում, – նրանց շահագործման կարողությունների ձեռքբերում, – սարքավորման տեխնիկական պարամետրերի իմացություն,

	<p>– ասեղի և մաքրքի փոխում:</p> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է գործարկել մեքենան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովել օժանդակ գործիքներով, ասեղով, թելով, յուղով, մասնագիտական գրականությամբ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Վերնամասը ձևավորող սարքավորումների ընտրություն
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում վերնամասի քթամասը, մեջքի մասը և կրնկամասը շրջաքաշող մեքենաները,</p> <p>2) ճիշտ է ընտրում ռանտային և դոպելային եղանակով վրաքաշման և շրջաքաշման մեքենաները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա գործարկել կոշիկի վերնամասը ձևավորող սարքավորումները և վերացնել պարզագույն թերությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – կոշիկի արտադրամասում օգտագործվող վերնամասը ձևավորող մեքենասարքավորումների դասակարգում, – նրանց շահագործման կարողությունների ձեռք բերում, – սարքավորումների տեխնիկական պարամետրերի իմացություն, – վերնամասը ձևավորող սարքավորումների տեխնոլոգիան: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ինքնուրույն կարողանում է գործարկել մեքենան:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովել օժանդակ գործիքներով, պլակատներով, սխեմաներով և գրականությամբ: Անհրաժեշտության դեպքում պետք է այցելել գործող կոշիկի ֆաբրիկա՝ ծանոթանալու սարքավորումների աշխատանքին:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կոշիկի տակացուի ամրացման և հարդարման սարքավորումների ընտրություն
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում ներբանը սոսնձով ամրացման սարքավորումները,</p> <p>2) ճիշտ է ընտրում ներբանը կարող մեքենաները,</p> <p>3) ճիշտ է ընտրում ձուլման եղանակով տակացուի ամրացման համապատասխան սարքավորումը,</p> <p>4) ճիշտ է ընտրում կրունկները ամրացնող սարքավորումը:</p>

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողը պետք է կարողանա սպասարկել կոշիկի տակացու մասերի ամրացման և հարդարման մեքենասարքավորումը և վերացնել պարզագույն թերությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – արտադրամասում եղած կոշիկի տակացուի ամրացման և հարդարման մեքենաների դասակարգում, – անսարքությունների պատճառի պարզում, – մեքենայի նախապատրաստում աշխատանքին, – աշխատանքի անվտանգության ապահովում, – օժանդակ սարքավորումների գործարկման կարողություն: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա կարողանում է անխափան աշխատացնել մեքենան և կատարել որևէ օպերացիա՝ առանց լուրջ թերությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողը պետք է այցելի գործող կոշիկի ֆաբրիկա և տեղում ուսումնասիրի սարքավորումները:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՇԻԿԻ ՊԱՏՎԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	<p>ԿՇԿ-3-13-011</p>
Մոդուլի նպատակը	<p>Ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ շփման և իր գործունեությունն արդյունավետ կազմակերպելու հմտություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>18 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 16 ժամ</p>
Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-006 «Կոշիկի կաղապարներ», և ԿՇԿ-3-13-007 «Կոշիկի արտադրության մեջ օգտագործվող կաշիներ, այլ նյութեր» մոդուլները:</p>
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. կոշիկ կարելու համար ընտրի նյութեր և մշակի էսքիզ, 2. վերցնի կոշիկի չափսերը և կատարի համապատասխան հաշվարկներ, 3. ձևի և կտրի կոշիկի նյութերը՝ հաշվի առնելով ոտնաթաթի չափսի տվյալները, 4. կատարի կոշիկի պատվերը և դրա վերլուծությունը,

	5. ամրագրի կոշիկի պատվերը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կոշիկ կարելու համար նյութերի ընտրություն և էսքիզի մշակում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում կոշիկ կարելու նյութերը, 2) ճիշտ է մշակում էսքիզն ըստ մոդելի:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի և բանավոր հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողը պատվերին համապատասխան ճիշտ է ընտրում կոշիկ կարելու համար երեսացու, տակացու և օժանդակ նյութերը: Ճիշտ է մշակում էսքիզը պատվիրատուի պահանջին համապատասխան: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է ընտրում նյութերը, և մշակված էսքիզը էական շեղում չունի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքը ձեռք է բերվում գործնական պարապմունքների և անհատական աշխատանքների միջոցով: Դասի կահավորման համար անհրաժեշտ է ունենալ գրականություն կոշիկի նյութերի վերաբերյալ, ամսագրեր, լեկալներ, մատիտ և կոշիկի հիմնական և օժանդակ նյութերի տեսականի:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կոշիկի չափսերի վերցնում և համապատասխան հաշվարկների կատարում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է վերցնում ոտնաթաթի չափսերը, 2) ճիշտ է կատարում անհրաժեշտ հաշվարկները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի միջոցով: Առաջադրված կոշիկի կառուցվածքի համար ոտքի կմախքից կամ պայմանական պատվիրատուից (օրինակ՝ համակուրսեցուց) վերցնել ոտնաթաթի չափսերը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անթերի վերցրել է բոլոր անհրաժեշտ չափսերը և կարող է օգտվել չափաբանական աղյուսակներից:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների և անհատական աշխատանքների միջոցով: Դասի կահավորման կազմում անհրաժեշտ է ունենալ ոտքի կմախք, կաղապարներ, պլակատ, չափիչ սարք, ժապավեն և մատիտ:
Ուսուցման երաշխավորված	Տեսական ուսուցում՝ 0 ժամ

Ժամաքանակը	Գործնական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կոշիկի նյութերի ձևում և կտրում՝ հաշվի առնելով ոտնաթաթի չափսի տվյալները
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է պատրաստում լեկալը,</p> <p>2) ճիշտ է նախապատրաստում նյութերը ձևման և կտրման համար,</p> <p>3) ճիշտ է տեղադրում լեկալը նյութերի վրա:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է տեսական ուսուցման և գործնական առաջադրանքների կատարման հիման վրա:</p> <p>Ուսանողը պետք է լեկալների հանում կատարի, ինչպես նաև լեկալներով կատարի նյութերի ձևում և կտրում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – կոշիկի երեսացու և տակացու նյութերի ձևում և կտրում, – լեկալների տեղադրման եղանակները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը լեկալների տեղադրման և նյութերի ձևման հարցում տալիս է գրագետ և բովանդակալից պատասխաններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է դասերի ընթացքում հաճախել կոշիկի ֆաբրիկա՝ ծանոթանալու լեկալների բազմացման մեքենայի աշխատանքի հետ, ինչպես նաև՝ ձևման պրոցեսի հետ: Արհեստանոցում պետք է լինեն տարբեր տեսակի կոշիկի նյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական ուսուցում՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Կոշիկի պատվերի և դրա վերլուծության կատարում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է որոշում կոշիկի պատրաստման աշխատանքների ծավալը և տևողությունը,</p> <p>2) ճիշտ է ընտրում պատվերին համապատասխան կաղապարը,</p> <p>3) ճիշտ է առանձնացնում դետալները,</p> <p>4) ճիշտ է կատարում պատվերի վերլուծությունը՝ գնահատելով նյութածախսը և աշխատատարությունը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական պարապմունքների և տնային առաջադրանքների ստուգման հիման վրա:</p> <p>Ուսանողին գործնական պարապմունքների ժամանակ հանձնարարվում է կաղապարի ճիշտ ընտրությունը, դետալների մասնանջատումը և նյութածախսի որոշումը: Ստուգվում է ընթացքում տրված առաջադրանքների կատարումը:</p> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը պատվերին համապատասխան կաղապար է ընտրում, դետալները ճիշտ է առանձնացնում և կարողանում է գրագետ ձևով հաշվարկել 1 զույգի նյութածախսը:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների և տնային առաջադրանքների հիման վրա: Անհրաժեշտ է ստուգումը կատարել կոշիկի լաբորատորիայում, որտեղ կա կաղապար, նյութեր, շաբլոններ, ինչպես նաև դետալների մակերեսների չափման հաշվիչ տեխնիկա: Անհրաժեշտության դեպքում կարելի է հաճախել կոշիկի ֆաբրիկա:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կոշիկի պատվերի ամրագրում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պատվիրատուին կոշիկի պատրաստման համար անհրաժեշտ գործողությունները, 2) ճիշտ է կատարում մատուցված ծառայության ընդհանուր գումարի հաշվարկը, 3) ճիշտ է ձևակերպում և ամրագրում փոխհամաձայնության փաստաթուղթը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին տրվելու են կոշիկի պատրաստման գործողությունների, մատուցված ծառայությունների ընդհանուր գումարի, պատվերի ձևակերպման և փաստաթղթերի ձևակերպման մասին: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, պատկերացնում է պատվիրատուի և արտադրողի փոխշահավետ համագործակցության կարևորությունը և խնդիրները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է հարց ու պատասխանի, պարապմունքների միջոցով: Ուսուցումը կատարվում է մասնագիտական կաբինետում: Պետք է լինի հաշվիչ տեխնիկա, ձևակերպման գիրք և համակարգիչ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՇԻԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԿՇԿ-3-13-012
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ համապատասխան գիտելիքներ, ձևավորել անհրաժեշտ հմտություններ տարբեր տեսակի վնասվածության աստիճանի կոշիկների վերանորոգում կատարելու համար՝ տիրապետելով նյութագիտությանը, կոշիկի տեխնոլոգիային, ամրացման տարբեր ձևերին և մեթոդներին:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 16 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿՇԿ-3-13-005 «Մարդու ոտնաթաթ», ԿՇԿ-3-13-006 «Կոշիկի

	կաղապարներ», և ԿՇԿ-3-13-007 «Կոշիկի արտադրության մեջ օգտագործվող կաշիներ, այլ նյութեր» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ol style="list-style-type: none"> 1. վերանորոգի բնական, արհեստական և սինթետիկ կաշիներից վերնամաս ունեցող կոշիկներ, 2. կատարի կոշիկի վերնամասի լրիվ քանդում, աստառացու մասերի փոխում և ֆուրնիտուրաների տեղադրում, 3. ճիշտ օգտագործի մեքենաները, ասեղները, թելերը, ներկերը և ապրետուրաները, 4. վերանորոգի կոշիկի տակացու մասերը և կրունկների ամրացման համար օգտագործի մամլիչներ և սարքավորումներ, 5. ամրացնի մետաղյա մասերը և պատրաստի դետալները և կատարի կոշիկի լայնացում, 6. որոշի կոշիկի վերնամասի և տակացուի վնասվածության աստիճանը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլը ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնական, արհեստական և սինթետիկ կաշիներից վերնամաս ունեցող կոշիկների վերանորոգում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում վերնամասի կանթի ուղղությամբ քանդված կարերի վերանորոգումը, 2) ճիշտ է ընտրում ասեղը և մեքենան, 3) ճիշտ է վերանորոգում ամրակարերը վրադիր մասերի դեպքում, 4) ճիշտ է վերացնում կոշիկի վրա եղած թերությունները օգտագործելով համապատասխան նյութեր, 5) ճիշտ է ընտրում օգտագործվող ներկը և քսուքը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին տրվելու են բնական և սինթետիկ կաշիներից վերնամաս ունեցող կոշիկների վորանորոգման աշխատաքներ իրականացնելու մասին հանձնարարականներ: Արդյունքի ուսումնասիրման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> – բնական, արհեստական և սինթետիկ կաշիների առանձնահատկությունները, – վերանորոգման համար օգտագործվող ասեղի և թելի ընտրում, – օժանդակ նյութերի և քսուկների ընտրությունը, – մեքենայի ընտրում և նախապատրաստումը աշխատանքին: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է կատարում հանձնարարականները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովվել կարի մեքենայով, օժանդակ նյութերով, ասեղով, թելով և քսուկներով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կոշիկի վերնամասի լրիվ քանդում, աստառացու մասերի փոխում և ֆուրնիտուրաների տեղադրում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է քանդում վերնամասը՝ առաջամասում և հետնամասում նոր աստառ տեղադրելու կարիք, փոթեր և ծալքեր չլինելու պայմանով,</p> <p>2) ճիշտ է տեղադրում փոլակները և ամրացնում կեռիկները մեքենաների վրա,</p> <p>3) ճիշտ է տեղադրում և վերանորոգում կայծակաճարմանդը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարականների միջոցով: Ուսանողին պետք է կարողանա լրիվ քանդել կոշիկի վերնամասը, աստառը փոխել և ֆուրնիտուրաները ամրացնել:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – մեքենաների նախապատրաստումը աշխատանքին, – աշխատանքի անվտանգության ապահովումը, – աստառացու նյութի ճիշտ ընտրությունը, – փոլակների և կեռիկների ճիշտ ընտրությունը, – կարաբաժինների և մետաղյա մասերի ամրացման տեխնոլոգիական պահանջները: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է քանդում և փոփոխում աստառը առանց էական թերությունների և ճիշտ է պատասխանում հարցերին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական առաջադրանքների կատարման միջոցով: Ուսանողին պետք է ապահովել աստառացու կաշվի տեսականիով, կարի ասեղով, թելով, փոլակներով և կեռիկներով: Պետք է լինի նաև մասնագիտական գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Մեքենաների, ասեղների, թելերի, ներկերի և ապրետուրաների ճիշտ օգտագործում
Կատարման չափանիշներ	<p>1) վարժ աշխատում է մեկ ասեղանի ուղղահայաց հենահարթակով, արմունկային և զինգեր տիպի կարի մեքենաների վրա,</p> <p>2) ճիշտ է ընտրում ասեղների կտրվածքը ըստ նյութերի,</p> <p>3) ճիշտ է ընտրում թելերի տեսակները,</p> <p>4) վերնամասի արատները վերացնելիս ճիշտ է ընտրում ներկերը:</p>

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաձադրանքի հիման վրա: Ուսանողների գիտելիքները ճիշտ գնահատելու համար խումբը բաժանում ենք 4 – 5 ենթախմբերի: Ենթախմբերի ուսանողներին տրվելու են հարցեր՝ կարի մեքենաների կառուցվածքների, ասեղների, թելերի, ներկերի և ապրետուրաների մասին: Ինչպես նաև կհանձնարավի ըստ կոշիկի կառուցվածքի և վերնամասի համար օգտագործվող նյութերի ճիշտ ընտրել մեքենաները, ասեղները, թելերը, ներկերը և ապրետուրաները՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – վերանորոգող արտադրամասում օգտագործվող կարի մեքենասարքավորումների դասակարգում, – ասեղների կառուցվածքները իրենց կտրվածքով, – արհեստանոցում եղած թելերի կառուցվածքները, – ներկերի և քսուկների ճիշտ ընտրություն: <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե նա հիմնականում ճիշտ է պատասխանում նշված հարցերին:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների միջոցով: Պարապմունքների մի մասը կարելի է անցկացնել կոշիկի վերանորոգման արհեստանոցում: Ուսանողը պետք է ապահովված լինի՝ ասեղների տեսականիով, թելերով, ներկերով և մասնագիտական գրականությամբ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Կոշիկի տակացու մասերի վերանորոգման և կրունկների ամրացման համար մամլիչների և սարքավորումների օգտագործում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է ներկայացնում տակացուի ամրացման մեթոդները, 2) ճիշտ է աշխատում ներբանը ամրացնող ձեռքի մամլիչի և հիդրավլիկ մամլիչի վրա, 3) կարողանում է աշխատել փայտից և պլաստմասսայից կրունկները պտուտակներով ամրացնող մեքենայի վրա:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողը կհանձնարարվի դասակարգել և կիրառել ներբանի և կրունկի ամրացման մամլիչները և սարքավորումները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մասնրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> – կոշիկի դասակարգումը ըստ տակացուի ամրացման մեթոդների, – ձեռքի մամլիչի և հիդրավլիկ մամլիչների կառուցվածքները, նրանց աշխատանքը, – փայտից կրունկները ամրացնող մեքենաների կառուցվածքը և աշխատանքը:

	Ուսանողի կողմից արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե ուսանողը տարբերում է կոշիկը ըստ տակացուի ամրացման մեթոդների և կարողանում է աշխատել մամլիչների և սարքավորումների վրա:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցումը կատարվում է կոշիկի լաբորատորիայում: Լավ կլինի գործնական պարապմունքներն անցկացնել կոշիկի վերանորոգման արհեստանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Մետաղյա մասերի և պատրաստի դետալների ամրացում և կոշիկի լայնացում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տեղադրում կանանց և տղամարդկանց կոշիկների մեջքի լրացուցիչը (սուպինատորը), 2) ճիշտ է փոխում կանացի միջին և բարձր կրունկով կոշիկների կրունկների փաթաթանը, 3) ճիշտ է կատարում պայտերի ամրացումը, 4) ճիշտ է աշխատում կոշիկի լայնացման սարքավորման վրա և պահպանում ժամկետը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողը պետք է կարողանա անթերի կատարել՝ մետաղյա մասերի և պատրաստի դետալների ամրացում, ինչպես նաև կոշիկի լայնացում: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա մետաղյա մասերի ամրացման և կոշիկի լայնացման ժամանակ էական բացթողումը թույլ չի տալիս:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Լաբորատորիայում պետք է լինի՝ սուպինատորի տեսականի, կրունկների տեսականի, պալտեր և կոշիկի լայնացման սարք: Անհրաժեշտության դեպքում պետք է այցելել վերանորոգող սրահ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Կոշիկի վերնամասի և տակացուի վնասվածության աստիճանի որոշում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է որոշում երեսացուի վնասվածության աստիճանը, 2) ճիշտ է որոշում տակացուի վնասվածության աստիճանը, 3) ճիշտ է որոշում ֆուրնիտուրաների վնասվածության աստիճանը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողներին հանձնարավելու են որոշել տարբեր կոշիկների վերնամասի և տակամասի վնասվածության աստիճանը: Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նար հիմնականում ճիշտ է որոշում վնասվածության

	չափը: Թույլատրվում են ոչ էական բացթողումներ և վրիպումներ պատասխանների մեջ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաճեշտ է տարբեր կառուցվածքների և միացման մեթոդների կոշիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 0 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ